«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման՝ <<Գործնական աշխատանքների իրականացումը առարկայի դասավանդման ընթացքում (Գրականություն 7-9_րդ դասարաններ)>>

Առարկան՝ հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝Յողիկ Սանասարի Պետրոսյան

Ուսումնական հաստատություն՝ ՀՀ Կոտայքի մարզի Արզականի Խ. Խաչատրյանի անվան միջն.դպրոց

Երևան 2022

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ /ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 7-9-րդ դասարաններում/

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն: Գործնական մեթոդներ: Գործնական աշխատանք: ---- 3
2. Գործնական աշխատանքը որպես ձևավորող և միավորային գնահատման տեսակ: Գործնական աշխատանքների իրականացումը գրականության /7-9-րդ դասարաններ/ դասավանդման ընթացքում---- 4
3. Եզրակացություն ---------- 22
4. Օգտագործված գրականության ցանկ ---------- 23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ: ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մեթոդը գործունեության եղանակների և հնարների յուրատեսակ համակարգ է, որն ապահովում է գործունեության խնդիրների իրականացումը: Ժամանակակից մանկավարժության մեջ մեթոդների դասակարգման տարբեր սկզբունքներ կան: Ուսուցման մեթոդները պայմանականորեն կարելի է ներկայացնել երկու խումբով՝ ավանդական և նոր կամ ժամանակակից:

Ուսուցման արդյունավետությունն ավելի բարձր է լինում այն դեպքում, երբ **խոսքայի մեթոդները**՝պատմելը, զրույցը, բացատրությունը, դասախոսությունը, բանավեճը զուգակցվում են ցուցադրմանը:

Զննական մեթոդների միջոցով սովորողների կողմից ուսումնական նյութի յուրացումը կախում ունի դիտազննական պարագներից և ուսուցման տեխնիկական միջոցներից: Զննականությունը հնարավորություն է ընձեռում օբյեկտներին, առարկաներին ծանոթանալ բնական վիճակում և կամ սիմվոլների միջոցով:

Գործնական մեթոդների օգտագործմամբ գործնական աշխատանքները կազմակերպվում և իրագործվում են որոշակի, երբեմն լայնածավալ թեմաներ ուսումնասիրելուց հետո: Դրանք կրում են ընդհանրացնող բնույթ: Նշված բոլոր մեթոդների բնույթը և գործածումը կախում ունի տվյալ ուսումնական առարկայի առանձնահատկություններից: Գործնական մեթոդը կարելի է իրագործել հետևյալ հնարների գործադրմամբ. 1. առաջադրանքի պլանավորում, 2. առաջադրանքի կատարում, 3. կատարման ընթացքի խթանում, 4. վերահսկողություն, 5. կատարված գործնական աշխատանքի արդյունքների վերլուծություն, թերությունների, սխալների հայտնաբերում: Գործնական աշխատանքները փոխկապակցված են հանձնարարմանը նախորդած ուսումնասիրությունների, ուսումնական նյութերի հետ , պլանավորված, պարզաբանված և պարզեցված՝կանխանշած նպատակին հասնելու համար: Սրանք կազմակերպվում են ուսումնական բոլոր առարկաներից, ուսուցման գործընթացի ընթացքում:

Հայտնի է, որ ընթացիկ գնահատման համակարգը բաղկացած է երկու իրար փոխլրացնող ձևերից՝ ուսուցանող /ձևավորող/ գնահատում և սովորողների

առաջադիմության միավորային /քանակական/ գնահատում: Գնահատման այս երկու ձևերի նպատակային և գործառութային բազմազանությունն ապահովելու համար կիրառվում են ստուգման ամրագրված տեսակներ: Թե՛ ուսուցանող գնահատման , թե՛ միավորային գնահատման համար կարելի է և պետք է հանձնարարվեն գործնական աշխատանքներ:

Հաջորդիվ կներկայացվեն այն մեթոդներն ու հնարները, որոնց օգտագործմամբ իրականացվում են գործնական աշխատանքները գրականության /7-9-րդ դասարաններ/ դասավանդման ընթացքում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՈՐՊԵՍ ՁԵՎԱՎՈՐՈՂ ԵՎ ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՍԱԿ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՅՀԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Աշակերտին սովորեցրու աշխատել, նրան ստիպիր ոչ միայն սիրել աշխատանքը, այլև այնքան նրան հարազատանալ, որպեսզի այն դառնա նրա երկրորդ բնավորությունը, սովորեցրու նրան այն բանին, որ նրա համար աներևակայելի լինի այլ կերպ, քան սեփական ուժերով որևէ բան յուրացնելը, որ նա ինքնուրույնաբար մտածի, որոնի, իրեն դրսևորի, զարգացնի իր ննջող ուժերը, իրենից մշակի անսասան մարդու:

Ադոլֆ Դիստերվեգ

/գերմանացի մանկավարժ/

Կրթական վերափոխումների ներկա փուլում բոլոր աշխատանքները պետք է միտված լինեն ավելացնելու սովորողների հետաքրքրությունն ուսուցանվող առարկաների նկատմամբ և բարձրացնել ուսումնառության արդյունավետությունը: ՈՒսուցման և ուսումնառության աշակերտակենտրոն մոտեցումը հիմք ընդունելով՝ յուրաքանչյուր սովորողի դարձնել դասի գործուն մասնակիցը: Այդ նպատակն իրականացնելու համար օգտագործվում են փոխներգործուն, ավանդական, համագործակցային ուսուցման բազմաթիվ մեթոդներ. Այս դեպքում դասի կենտրոնում սովորողներն են, որոնք, ներգրավվելով տարբեր աշխատանքների մեջ, ոչ միայն արդյունավետ կերպով յուրացնում են

ուսումնական նյութը, այլև այդ ընթացքում ձեռք են բերում ինքնուրույն մտածելու, բանավիճելու, հաղորդակցվելու, միմյանց լսելու,միմյանցից սովորելու և այլ կարևոր կարողություններ և հմտություններ: ՈՒսուցիչն այս դեպքում դասի առանցքը չէ, տեղեկատվության միակ աղբյուրը չէ, նա ուսումնական գործընթացի մասնակից է, համակարգող է, ուղղորդող, խորհրդատու: Երբ աշակերտը կատարող է, կատարում է և սովորում:

Հանրակրթության դերը պայմանավորված է նաև նրա գործնական-կիրառական նշանակությամբ: Ժամանակակից պայմաններում ուսուցման կարևոր նպատակներից մեկն է աշակերտին սովորեցնել ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները կիրառել կյանքում հանդիպող տարբեր գործնական խնդիրներ լուծելիս:

Գործնական են համարվում սովորողների կողմից կատարվող այն աշխատանքները, որոնք վերաբերվում են նրանց ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների գործնական կիրառություններին /ենթադրվում են լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ, համակարգչի կիրառություն, այլ տեխնիկական միջոցներ/:

Գործնական կարող են համարվել այն աշխատանքները, որոնց կատարման համար թուղթ ու գրիչից բացի օգտագործվում են նաև այլ միջոցներ :

Գործնական աշխատանքներ կիրառվում են բոլոր ուսումնական առարկաների շրջանակում՝ անպայմանորեն կառուցելով առարկայի չափելի վերջնարդյունքների վրա, ինչն էլ պայմանավորում է առաջադրանքի և աշխատանքի տեսակի ընտրությունը:

Այսուհետ դիտարկումները կներկայացվեն մասնավորապես ‹‹Գրականություն›› առարկայի /7-9-րդ դասարաններ/ ծրագրային նյութերի ուսուցման տեսանկյունից:

Գործնական աշխատանքների դասակարգման հիմքում դրվում է սովորողի գործունեության ձևը, և ըստ այդմ գործնական աշխատանքները բաժանվում են երեք խմբի՝

- *վերարտադրողական*, որոնք հնարավորություն են տալիս ցուցադրելու՝ ինչ է սովորել և ինչ է կարողանում անել սովորողը /օրինակ՝ նկարազարդել ուսուցանվող նյութը, կազմել բնութագրական աղյուսակներ և այլն/,

- *մասամբ որոնողական*, երբ սովորողը պետք է ոչ միայն ցույց տա՝ ինչ է սովորել և ինչ է կարողանում, այլև կատարի լրացումներ, լուծի իրեն առաջադրված խնդիրը /օրինակ՝ լրացնել Քառաբաժան աղյուսակ, Վեննի դիագրամ և այլն /,
- *ստեղծագործական*, երբ սովորողը ինքը պետք է ինքնուրույն կամ խմբի անդամների հետ լուծում գտնի առաջադրված խնդրի համար՝ ցուցադրելով կարողունակությունների զարգացման որոշակի մակարդակ /օրինակ՝ մտքի քարտեզագրում, սահիկահանդեսների պատրաստում /նկարչական և երաժշտական ձևավոնում/,ինչի համար սովորողը պետք է դրսևորի ոչ միայն մեկ, այլ մի քանի առարկաների, այլև վերառարկայական հմտություններ/:

Վերոնշյալից արդեն պարզ է դառնում, որ գործնական աշխատանքները բազմազան են՝ պաստառի ձևավորումից մինչև էքսկուրսիայի ընթացքում տեսածի ու լսածի ներկայացում աղյուսակի, ֆիլմի, ակնարկի տեսքով, երգի հորինումից մինչև նախագծի իրականացում, արդյունքների ներկայացում ու կիրառում:

Նշված գործնական աշխատանքները կարող են իրականացվել ինչպես անհատապես, այնպես էլ խմբային աշխատանքի շրջանակում, դպրոցում, տանը կամ այլ վայրում, գնահատվել միավորով կամ բառային բնութագրումներով: Արդյունքները կարող են ներկայացվել սովորողի կամ սովորողների խմբի ընտրությամբ՝ նպատակից ելնելով:

«Գրականություն» առարկայի ուսուցման ընթացքում նույնիսկ գրական երկի հետ առնչությունը /ընթերցում, դերախաղը…/ արդեն իսկ գործնական աշխատանք է:

5-6-րդ դասարաններում մայրենիի միասնացված դասընթացից հետո 7-րդ դասարանում ուսումնասիրության է ներկայացվում բավականին հագեցած ծրագիր՝ ծավալուն, լեզվական առանձնահատկություններ ունեցող /տարբեր բարբառների տարրեր պարունակող/, ժանրային տարբերություններ ունեցող նյութեր: Այդ նյութերի ուսուցումը և ուսումնասիրությունը դյուրին դարձնելու համար անհրաժեշտ է կիրառել տարբեր մեթոդներ, հանձնարարել տարաբնույթ գործնական աշխատանքներ:

Դ. Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքը ուսումնասիրելիս կազմել բնութագրական աղյուսակ՝ համեմատելով, համադրելով կերպարները, ցույց տալով կերպարների զարգացումը.

- Հաճի աղայի մտահոգությունը՝ նախ փրկել գերդաստանը, փրկել «պետքականները» ,ապա վճռեց ազատել կարևորագույնը ՝ իր տունը, իսկ եթե այդ չեղավ, իր անձը. վճռեց ու դաժանացավ: Ապա պատմվածքի ավարտին՝ ապաշխարումը:
- Սրբունի նվիրումը, այլասիրությունը…

Պատմվածքի ավարտը՝ «Ավելորդ մարդ չկա…» :

Ընթերցանության ընթացքում ուշադրություն դարձնել բարբառային բառերին և արտահայտություններին, կազմել բառարան՝ բարբառային բառերը և դրանց գրական համարժեքները:

Կամ Գ. Մահարու «Բալլադ Չալոյի և առաջին սիրո մասին» բանաստեղծությունն ուսումնսիրելիս հանձնարարվում է գտնել ինքնակենսագրական հենքը, նկարագարդել բանաստեղծությունը, պատրաստել սահիկահանդես:

Որպես գործնական աշխատանքի տեսակ կարելի է ներկայացնել դերակյին խաղը, որն ունի կիրառման լայն հնարավորություններ և հաճախություն ուսումնական տարբեր առարկաների, հատկապես մայրենիի, գրականության շրջանակում: Այն շատ ավելի լուրջ ու լայն հնարավորություններ է տալիս յուրաքանչյուր սովորողի իմացական և հուզակամային որակների զարգացման, քննադատական մտածողության, իրավիճակում կողմնորոշվելու, ինքնաարտահայտվելու և ինքնադրսևորվելու համար:

Պետք է իրավամբ նշել, որ դերային խաղն իր մեջ ամփոփում է գործնական աշխատանքների բոլոր 3՝ վերարտադրողական, որոնողական և ստեղծագործական տեսակների տարրեր: Դերային խաղին պետք է վերաբերվել ոչ թե որպես ժամանցի, այլ գործանական բազմափուլ աշխաանքի, որի յուրաքանչյուր փուլ լուծում է կոնկրետ նպատակներ: Հետևաբար, անհրաժեշտ է հանգամանորեն պլանավորել դերային խաղը՝ նախապես սահմանելով նպատակ, ձևակերպելով չափելի վերջնարդյունքներ:

Առանձնացվում է դերային խաղի 2 տեսակ՝ ուղղորդված և հանպատրաստից՝ դասակարգման հիմքում դնելով սովորողների ակտիվ կամ պասիվ որոշում կայացնելու հանգամանքը: Ուղղորդված դերային խաղի արդյունավետությունը ապահովելու համար դրանք պետք է լինեն մանրակրկիտ ծրագրված և լավ

ուղղորդված: Կարևոր է առաջադրանքը սկսելուց առաջ անդրադառնալ հետևյալ հարցերին.

- Ինչի՞ն է նպաստում դերախաղի կազմակերպումը:
- Որո՞նք են դերախաղի նպատակն ու խնդիրները:
- Որո՞նք են դերախաղի ընդհանուր կանոնները:
- Որո՞նք են դերախաղի փուլերը:

Հանպատրաստից դերախաղի դեպքում հակառակը՝ պետք է ապահովել սովորողների ազատությունը:

Ցանկացած դերախաղի համար կան հստակ կանոններ, որոնց պահպանումը հնարավորություն կտա արդյունավետ աշխատելու և հետագայում էլ բարելավելու արդյունքները, ինչն էլ հենց ձևավորող գնահատման նպատակն է: Այդ կանոններից են, օրինակ, որ ուսուցիչը ակտիվ դեր չի խաղում դերային խաղի մեջ: Նա հոգ է տանում, որ մասնակիցները պահպանեն սահմանված կանոնները, հետևում է ընթացքին և անհարկի չի միջամտում դերախաղին: Կամ՝ որ մասնակիցները որևէ դեր ստանձնելու պարտավորություն չունեն, կարող են ընտրել դեր կամ լինել դիտորդ: Կարևոր կանոն է, որ սովորողները հստակ տարանջատեն խաղի կերպարին դերակատարից և այլն:

Դերախաղի արդյունավետությունը ապահովելու համար հարկավոր է, որ ուսուցիչը հասկանալի և պարզ ձևակերպի խաղի հրահանգները, դերերի վերաբերյալ ցուցումները շարադրի այնպես, որ սովորողները անձնական նախաձեռնության հնարավորություն ունենան: Միաժամանակ այնպիսի պահանջներ դնի, որոնք կնպաստեն դերախաղի միջոցով ուսումնական նպատակին հասնելուն, խաղն ընտրի տարիքային խմբին համապատասխան, նախապատրաստի համապատասխան պարագաներ և այլն:

Բնականաբար, պետք է պատրաստ լինել, որ դերախաղը միշտ չէ, որ հարթ է անցնելու, հնարավոր է, որ կլինեն որոշակի դժվարություններ: Օրինակ՝ սովորողները կարող են կաշկանդվել խաղի ժամանակ: Այս դեպքում անհրաժեշտ է նրանց ազատել սխալվելու վախից: Առաջադրանքին ընտելանալու համար սովորողներին որոշակի ժամանակ է անհրաժեշտ և կարիք չկա նրանց վրա ճնշում գործադրելու: Եթե դերախաղերը պարբերաբար կազմակերպվեն, բոլոր սովորողները աստիճանաբար կգիտակցեն դրանց կարևորությունը: Հնարավոր է, որ սովորողները

թերահավատորեն մոտենան դերախաղերին: Պետք է նրանց բացատրել դերախաղերի կարևորությունը նաև ապագայում մասնագիտական հմտություններ ձեռք բերելու հարցում:

Դերային խաղի գնահատումն իրականացվում է բոլոր այն չափանիշներին համապատասխան, որոնք սահմանված են բանավոր խոսքի համար: Թերևս այս դեպքում կարելի է որպես լրացուցիչ չափանիշ ավելացնել բեմական կամ դերասանական խաղը:

Կարևոր է պահպանել ձևավորող գնահատման բաղադրիչների ամբողջականությունն ու հաջորդականությունը: Միշտ պետք է հիշել հետադարձ կապի մասին. առհասարակ ցանկացած աշխատանքից հետո անհրաժեշտ է քննարկել արդյունքները, որպեսզի սովորողները հնարավորություն ունենան արժևորելու աշխատանքի ստեղծագործական և ինքնատիպ մոտեցումները:

7-րդ դասարանում այսպիսի աշխատանք է կազմակերպվում Վ. Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» դրամայի հատվածն ուսումնասիրելիս: Երբ աշխատանքը հետևողական և համակարգված է կազմակերպվում, երբ աշակերտները գիտակցում են, հասկանում են իրենց հանձնարարված կերպարի բնորոշ գծերը, այնքան են տարվում հերոսների կյանքով, որ խաղը բեմականացման փորձից դառնում է միջոցառում-ներկայացում:

7-րդ դասարանի աշակերտների համար հետաքրքիր և երկարաժամկետ աշխատանք է Հրանտ Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» և Ջեկ Լոնդոնի «Ոսկե կիրճը» պատմվածքների քարտեզագրումը՝ աղյուսակների կազմումը.

Հրանտ Մաթևոսյան «Կանաչ դաշտը»

Բնությունը /կերպարները/	Մայրը բնության մեջ	
	ձի	գայլ

Նաև հանձնարարվում է գրել շարադրություն «Մայրը բնության մեջ՝ թե՛ ձի, թե՛ գայլ» վերնագրով:

Ջեկ Լոնդոնի «Ոսկե կիրճը»

Բնությունը /կերպարները/	Մարդը	
	Ոսկի որոնողը	հետապնդողը

ՈՒսումնասիրությունների, վերլուծությունների, բնութագրման, համեմատության և համադրման միջոցով աշակերտները եզրահանգում են, որ բնության մեջ տիրող ներդաշնակությունը հաճախ խախտվում է հավերժական գոյության պայքարով: Աշակերտները նկատում են, որ այդ ընթացքում առաջանում են բնապահպանական խնդիրներ՝ մայր հողի վրա բացվում են վերքեր, առաջանում սպիներ, եզրակացնում են,որ բնությունը նույնպես ունի հիշողություն: Այդ ամենը ներկայացնում են նկարազարդումների միջոցով:Այս աշխատանքները գնահատվում են միավորային գնահատմամբ:

Գրականության ուսուցման ընթացքն, ըստ դպրոցական ծրագրի, հիմնական դպրոցի 7-9-րդ դասարաններում աշակերտին հնարավորություն է տալիս ուսումնասիրել գրական ժանրերի գրականագիտական հատկանիշները , գրական հոսանքներն ու ուղղությունները, ծանոթանալ գրողների կյանքին և գործունեությանը, բնութագրել նրանց իրենց ժամանակի մեջ և ժամանակի մեջ ընդհանրապես, ուսումնասիրել առանձին ստեղծագործություններ, մեկնաբանել և վերլուծել :

8-րդ դասարանում Ռաֆֆու ազգային գաղափարներին ծանոթանում են «Խենթը» վեպից հատվածներ ուսումնասիրելով: Նպատակն է իմանալ գրողի ապրած ժամանակաշրջանի պատմաքաղաքական իրադրությունը, գրական երկերի ստեղծման հանգամանքները, տվյալ ժամանակաշրջանում գերիշխող գրական ուղղությունները: Կարողանալ բնութագրել ստեղծագործության հերոսներին, համեմատել, ուշադրություն դարձնել նրանց հոգեբանական զարգացմանը:Վերլուծել երկը, ընկալել հիմնական ասելիքը: Կարդալ բնագիրը: Դասեր քաղել , դաստիարակվել հերոսների օրինակով: Համեմատել վեպում ներկայացված ժամանակաշրջանը այսօրվա հետ՝կատարելով ընդհանրացումներ:

Ներկայացնել տեղեկություններ՝ ով է վեպի Վարդանի նախատիպը: Վերլուծել վեպի վերջին հատվածը, նկարագրվող պահը և հերոսի հոգեկան ծանր վիճակը, ապա արթմնի երազը, որն ամբողջությամբ ազգային վերածննդի մի նախագիծ է:

Աշակերտների միջոցով վեր են հանվում այն բոլոր բարեփոխություններն ու առաջընթացը,զարգացումը, որը Ռաֆֆին պայմանականորեն ակնկալում էր 200 տարի հետո՝ կերպարանափոխված գյուղը, եկեղեցին/կրոնը/, կրթությունը և անհատը,մարդկանց կենցաղը, բարքերը, հարաբերությունները/կին և տղամարդ/, Լալան…գյուղացու երջանկությունը, բարեկեցությունը, իսկ թուրքե՞րը, իսկ քրդե՞րը…. բնությունը և մարդը, փոփոխությունները… կրթական հաստատությունները, նրանց նպատակը, երեսփոխական ընդհանուր ժողովը, համայնքի սեփականությունը և դրա տնօրինումը, մեքենայացված աշխատանք, գործարաններ, փոխադրամիջոցներ, գերդաստան և ընտանիք, վեպի կերպարները՝ պ. Սալման, Թոմաս էֆենդի, Մելիք- Մանսուր, տեր Մարուք, հոգեփոխության վարդապետությունը, մարդիկ՝ և՛ քաղաքացի, և՛ զինվոր…. Սա Ռաֆֆու գաղափարապաշտության և հայրենասիրության արտահայտությունն է՝ ԱՊԱԳԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԸ:

Հանձնարարվում է թեմատիկ գրավոր աշխատանք ‹‹Վարդանի երազը՝ ապագայի Հայաստանը›› /շարադրություն/:

Տեղեկատվական հասարակությունը, որտեղ ապրում են դպրոցականները, պահանջում է, որ նրանք կարողանան ընտրել անհրաժեշտ տեղեկատվությունը և սովորել, թե ինչպես աշխատել դրա հետ: Նույն խնդրին է բախվում ուսուցիչը: Նա պետք է պատրաստ լինի պատասխանել սովորողների ցանկացած հարցի: Դա անելու համար նա կարող է օգտագործել ուսուցման տարբեր մեթոդներ՝ բանավոր, գործնական և տեսողական: Դրանց թվում է էքսկուրսիան /ուսումնական ճամփորդությունը/, որը տեսողական ուսուցման մեթոդներից է:

8-րդ դասարանի գրականության ծրագիրը հնարավորություն է տալիս ծանոթանալ արևմտահայ գրականության նշանավոր դեմքերի՝ Պ. Դուրյանի, Գր. Զոհրապի, Դ. Վարուժանի, Մ. Մեծարենցի կյանքին և գործունեությանը, առնչվել նրանց ստեղծագործություններին:

Պ. Դուրյանի պարագայում բնությունն ինքն է տրամադրում բանաստեղծին սիրել. միաձույլ են բնությունն ու սերը. թավուտների մեջ է սիրելին և տերևներից է խոսում: Սիրո իր նկարները գիծ չունեն, ընդհանուր երանգներ են, տրամադրություն, նրա երգած սերն ու կույսը աներևույթ են, եթերային…

Եվ աշակերտներին հանձնարարվում է կարդալ << Սիրել>> բանաստեղծությունը՝ հետևելով ուսուցչի բացատրություններին, նրա ընթերցմանը. քանի որ այն աշակերտներին հանձնարարվող առաջին արևմտահայերեն բնագիրն է, հարկավոր է նախ ներկայացնել արևմտահայերենի արտասանական տարբերությունները/ բոլոր ձայնեղներն արտասանվում են շնչեղ խուլ, իսկ խուլերը՝ ձայնեղ, ռ և ր հնչյունները հնչում են միակերպ/: Արևմտահայերենը առ այսօր գործածում է հին / գրաբարյան/ ուղղագրությունը:

Նույնքան կարևոր է ըստ բնագրի արևմտահայերենի բառապաշարի ուսումնասիրումը, բառարանների կազմումը . խմբերին հանձնարարել առանձնացնել արևմտահայերեն բառերը, գրել արևելահայերեն համարժեքները /անհրաժեշտության դեպքում օգտվել բառարաններից/.

ինչպես՝ ըստ իմ քմաց – ըստ իմ քիմքի, ճաշակի,

հոս – այստեղ,

նե, ներա, ըզնե – արևմտահայ գրողների կողմից արհեստականորեն ստեղծված ձև՝ իգական սեռի անձնական դերանուն, 3-րդ դեմք….

Հետևելով բնագրին՝ տեսնում ենք՝ հիմնականում քերականական տարբերություններն են դժվարացնում բնագրի ընկալումը. տարբերություններ, որոնք պայմանավորված են պատմական տարբեր հիմքերով.

արևմտահայերենում բայի սահմանական ներկան կազմվում է կը մասնիկի միջոցով՝ կ՝ուզես – ուզում ես ,

բայն ունի երեք խոնարհում /լծորդություն / ել - դյութել, ալ - մենանալ, իլ – սրտակցիլ…

դերանունների, մակբայների տարբերությունները՝ որուն, ինծի, զ՝ անի, մի դերանվան մ՝ ձևը ձայնավորով սկսվող բառից առաջ՝ մը նայվածք, մ՝ որուն…բացատրել ապաթարցի գործածությունը,

արևմտահայերենում սեռական հոլովը սովորաբար որոշիչ հոդ է ստանում՝ առտըվան, իրիկվան,

կան շարահյուսական տարբերություններ ևս, որոնցից կարևոր է նաև ժխտական դերանունների գործածությունը բայի հետ . ժխտական դերանունները գործածվում են դրական խոնարհման բայաձերի հետ.

<< Ոչ ոք ըսավ. - Սա տղին…>>:

Այս ամենից հետո դյուրին է դառնում բնագրի ընթերցումը և մեկնաբանումը, կարելի է լրացնել աղյուսակը.

<< Սիրել>>	<< Դրժել>>
Բույլ մը նայվածք, փունջ մը ժպիտ, Քուրա մը խոսք դյութեց իմ սիրտ… /շարունակել/	Փունջ մը կնճիռ, բույլ մը կայծակ, Դըժոխք մ՝ անեծք խոցեց հոգյակս… /շարունակել/

Երկրորդ սյունակը լրացնել ուսուցչի՝ << Դրժել>> բանաստեղծության ընթերցումից հետո:

Աշակերտներին հետաքրքրում և հուզում են Պետրոս Դուրյանի կյանքն ու ճակատագիրը,նրա նամակներն ու բանաստեղծությունները: Նրա անհատական դրաման, ապրումները, ցավը այնպես են համակում պատանիներին, որ կարիք է զգացվում Դուրյանին հարազատ միջավայր գտնելու, Դուրյանի նման բնության, լճակի հետ մենանալու: Կազմակերպվում է ուսումնական ճամփորդություն, արշավ, նպատակներից մեկը հայրենագիտական է, բնաճանաչման: Իհարկե, հայրենի բնության արահետներով անցնելով աշակերտները ուշադրություն են դարձնում անծանոթին, նորին, գեղեցիկին, վտանգներին, բնապահպանական խնդիրներին: Սակայն գլխավոր նպատակը դուրյանական մի անկյուն բացահայտելն է .

Այստեղ աշակերտները արտասանում են Դուրյանի «Լճակը», մտորում, թե ինչ է «գրավիլ, լռել ու խոկալը», ապա ուսուցիչը ներկայացնում է «Տրտունջք» և «Զոջում» բանաստեղծությունները, և դասը բնության մեջ ավարտվում է Դուրյանի նամակների ընթերցանությամբ:

Սա գործնական աշխատանքի նախապատրաստական փուլն է ,աշակերտներին հանձնարարվում է գրել շարադրություն «Դուրյանի հետ» , կատարել «Տրտունջք» բանաստեղծության մտքի քարտեզագրում:

Մտքի քարտեզի համար պետք է հիշել հետևյալ տարրերը . մտքի քարտեզում ամենակարևոր դերը խաղում է թեման կամ հիմնական գաղափարը: Այսինքն, բոլոր գաղափարները, որոնք կառանձնացվեն, կպտտվեն թեմայի շուրջ: Կլինեն ենթաթեմաներ՝ հիմնական գաղափարի կամ թեմայի ճյուղերը: Հետևաբար, ճյուղեր ստեղծելիս պետք է մտածել բոլոր հիմնաբառերի մասին, որոնք առնչվում են հիմնական թեմային: Բացի այդ, կարելի է մանրամասնել յուրաքանչյուր բաղադրիչը, մինչև ստացվի կատարյալ գաղափար, որը համապատասխանում է դրան: Պետք է հիշել, որ մտքի քարտեզ կազմելիս պետք չէ նախադասություններ օգտագործել յուրաքանչյուր բաղադրիչի կամ հանգույցի համար: Ընդհակառակը, մտքի քարտեզագրումն այն է, որտեղ պետք է օգտագործվեն բառեր կամ պատկերներ: Այս քարտեզի վրա որոշ պատկերներ ավելացնելը կապ կստեղծի գաղափարների հետ: Նկարազարդումների միջոցով շատերը արագ կհասկանան հասկացությունները, ինչն օգուտ է տալիս սովորողին մտքի քարտեզագրման հարցում: Բացի պատկերներից, յուրաքանչյուր գաղափար կամ ճյուղ տարբեր գույներով ստվերելը նրանց ճիշտ նույնականացում կտա:



Հաջորդ դասին աշակերտները ներկայացնում են բանաստեղծի ապրումները, հակասական տրամադրությունները ,,Տրտունջք,, բանաստեղծության մեջ, մեկնաբանում տող առ տող, զուգահեռ ներկայացնում իրենց կատարած նկարազարդում-գծագրերը, բանաստեղծության հատվածները ներկայացնում անգիր:

Դասի վերջում կատարվում է ընդհանրացում՝ մեկնաբանելով ,,Տրտունջքի,, վերջին տողը՝որպես Դուրյանի կողմից աշխարհի փիլիսոփայական ընկալում.

ԱՍՏՈՒԾՈ ԾԱՂՐՆ Է ԱՇԽԱՐՀ ԱԼ ԱՐԴԵՆ...

,,Զղջում,, բանաստեղծության արտասանությամբ և մեկնաբանմամբ աշակերտները ներկայացնում են բանաստեղծի ապրումը մեկ օր հետո . մահվան մահճում տառապող հոգին զղջում է լոկ և ներում հայցում Աստծուց, որ մոր արցունքն է տեսել:

Ամփոփելով նյութը՝ աշակերտները հաստատում են, որ Դուրյանն ապրում է, որովհետև իրենք զգում և ապրում են նրա բանաստեղծությունները:

Ամփոփվում և գնահատվում է գործնական աշխատանքը՝նկատի ունենալով շարադրությունները, մտքի քարտեզը / ներկայացված է աշակերտներից մեկի աշխատանքը/,թղթապանակի նյութերը, պատրաստած գրքույկները, նկարազարդած էջերը, աշակերտների վերլուծություն-մեկնաբանությունները, արտահայտիչ խոսքը՝ ասմունքը:

8-րդ դասարանում ևս մի երկարաժամկետ աշխատանք է կազմակերպվում . ուսումնասիրելով Մուրացանի ‹‹Հասարակաց որդեգիրը››, Շիրվանզադեի ‹‹Արտիստը›› և Նար-Դոսի ‹‹Ես և նա›› պատմվածքները՝ կազմել բնութագրական աղյուսակ, որի միջոցով հնարավոր կլինի համեմատել Գևորգի /Մուրացանի ‹‹Հասարակաց որդեգիրը››/,Լևոնի / Շիրվանզադեի ‹‹Արտիստը›› /, ‹‹կորած մարդու›› և Անտոնիոյի /Նար-Դոսի ‹‹Ես և նա›› /կերպարները, վերլուծել նրանց կյանքի հանգամանքները, ապրած դրամատիկ իրավիճակները, կատարել ընդհանրացումներ, այդ կերպարների մեջ առանձնացնել հպարտ լինելը՝ որպես ընդհանուր գիծ, հակադրել Անտոնիոյի վրեժխնդիր լինելու ձգտումը՝ բարձրանալ, միշտ բարձրանալ… մինչ նախորդներին կործանում է այդպիսի ձգտման , կամքի բացակայությունը, տանում անկման:

Աշակերտներին հանձնարարվում է սահիկահանդես կազմակերպել Ավ. Իսահակյանի ‹‹Մի մրահոն աղջիկ տեսա›› բանաստեղծության պատկերներով՝ զուգադրելով բանաստեղծի պատանեկան ապրումներն ու այրական խոհերը սիրո մասին:

Մտքի քարտեզագրման հետաքրքիր օրինակ է Դ. Վարուժանի ‹‹Զոն›› բանաստեղծության գաղափարական հենքի վրա կատարված աշխատանքը

/օգտագործված են պայմանական նշաններ՝ սիմվոլներ, գույներ/.



Մտքի քարտեզագրումը խթանում է ստեղծագործելու ունակությունը: Այս մեթոդը նաև խթանում է վառ գաղափարները , բարդ թեման պարզեցնում է:

Վահան Տերյանի բանաստեղծություններն ուսումնասիրելուց, վերլուծելուց հետո հանձնարարվում է խմբային աշխատանք՝ կազմել և նկարազարդել գրքույկներ Տերյանի բանաստեղծական շարքերի խորագրերով՝ «Մթնշաղի անուրջներ» , «Երկիր Նաիրի»: Աշխատանքն ավարտելուց հետո կազմակերպել գրքույկների շնորհանդեսներ, մեկնաբանություն – բացատրություններն ուղեկցել Տերյանի խոսքերով գրված երգերի ունկնդրությամբ:

Մեծարենցի մասին խոսելիս անհրաժեշտություն և կարիք է առաջանում համեմատելու նախորդ հեղինակների հետ և ամենից առաջ ՝ Դուրյանի: Վերջինիս մասին նյութերն ուսումնասիրելիս արդեն կարելի էր նախապատրաստվել այս դասին՝ լրացնելով աղյուսակի մի մասը.

<< Պ. Դուրյան և Մ. Մեծարենց . ընդհանրություններ և տարբերություններ>>

Պ. ԴՈՒՐՅԱՆ	Ընդհանրություններ	Մ. ՄԵԾԱՐԵՆՑ
---------- Գրում էր դրամաներ, հայրենասիրություն, ռոմանտիկական ոճի ազդեցությունից՝ ռեալիստական մտածողություն և հոգեբանություն՝ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ՝ << ՏՐՏՈՒՆՋՔ>>՝ քնարական մենախոսություն՝ ինչպես << ՆԱՐԵԿԸ>>	Բնության հետ մտերիմ << ըլլալը>>, երկնքի հիվանդություն ունեին, ապրեցին սիրո անուրջներով միայն…, չէին ցանկանում, որ իրենց մայրերը տառապեին	---------- բնապաշտություն, խորհրդապաշտություն՝մարդը և բնությունը ներդաշնակ կապի մեջ, անհատի ցավին հակադրվում է ԱՅԼԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ՝ << ԸԼԼԱՅԻ՛, ԸԼԼԱՅԻ՛…>>, << ՏՈՒ՛Ր ԻՆԾԻ, ՏԵ՛Ր>>…. << ՆԱՐԵԿԱՅԻՆ ՀԵՏ>> հոդվածը,

Ձևավորել հետազոտական խմբեր, որոնք համապատասխան նյութեր կառանձնացնեն, ընդհանուր քննարկումից հետո կլրացվի աղյուսակը:

Սրանք սովորողի ուսումնական առաջընթացն ապահովելու նպատակով ուսուցման ընթացքում տեղեկությունների հավաքման և արժևորման միջոցով կատարվող աշխատանքներ են /ուսուցանող գնահատում/:

9-րդ դասարանի գրականության դասընթացն սկսվում է հայ գրականության զարգացման ընթացքի մասին տեղեկատվությամբ . աշակերտներին հանձնարարվում է կազմել աղյուսակներ՝ բնութագրելով զարգացման փուլերը:

Մ.Մաշտոցի և Մ. Խորենացու կյանքն ու գործունեությունը ուսումնասիրելուց, հայ մշակույթի, գրականության զարգացման վրա ունեցած ազդեցությունը գնահատելուց, ստեղծած հավերժական արժեքները կարևորելուց հետո աշակերտներին հանձնարարվում է հավաքել ‹‹Բազմանիստ /պրիզմա/›› :

Աշակերտների համար հետաքրքիր հանձնարարություն է ‹‹Սասունցի Դավիթ›› էպոսի Սասնա տան տոհմածառը կազմելը . սովորողները մանրակրկիտ ուսումնասիրում են արյունակցական կապերը, սերունդների հաջորդականությունը, ոմանք նույնիսկ այդ ամենը դիտում են տարածության /Գագիկ թագավորի պալատ, Բաղդադ, Մըսր, Սասուն… Ագռավաքար …/ և ժամանակի մեջ /Ծովինարից մինչև Փոքր Մհեր/: Հետաքրքիր գծագրեր են ստացվում, երբեմն կերպարների ճանապարհները խաչվում են, երբեմն ժառանգական գիծն ընդհատվում է. Սասնա տան զավակներին և օտար արյուն ունեցող կերպարներին և նրանց միջև եղած կապը տարբեր խորհրդանշական գույներով և գծերով են ներկայացնում: Պատահում է՝ աշակերտները նկատում են կողմնակի կապերը և պայմանական գծերով ներկայացնում / Մեծ Մհեր-Արմաղան, Իսմիլ Խաթուն, Արտատեր պառավ՝ ժողովրդի հիշողության կրողը, Մհերի յարը/: Սա բավականին խորքային աշխատանք է, անհրաժեշտ է համահավաք բնագրի ընթերցում: Աշխատանքի հաջողությունը ապահովելու համար խմբերին հանձնարարվում է նաև հետազոտական աշխատանք՝ թեմաների ընտրությամբ՝‹‹Սասնա տան զավակները››, ‹‹Քեռի Թորոս››,‹‹Ժողովուրդը էպոսում /հայ, արաբ/ ›› , ‹‹ Հայ կինը էպոսում ››,‹‹ Օտար կանայք էպոսում››, ‹‹ Մսրա Մելիքը և…››, ‹‹Փոքր Մհերը՝ ժողովրդի ազատության հույսը›› … Այս աշխատանքները ստուգելուց, համեմատելուց, վերլուծելուց հետո կատարվում է միավորային գնահատում:

Դեռևս 6-րդ դասարանում ծանոթանում ենք միջնադարյան տաղերգուների արվեստին, և 9-րդ դասարանում Նահապետ Քուչակի հայրեններին առնչվելը և՛ սպասված է, և՛ հետաքրքիր մտքեր է ծնում. աշակերտները նկատում և կարևորում են ազատ, անկաշառ սերը, միջնադարի կնոջ՝ որևէ կամայականության չենթարկվող ազատությունը, տղամարդու և կնոջ հավասարությունը, ներդաշնակ կյանքի ձգտումը… հայրենների մեջ աշակերտները փնտրում են արդիականը, ինչը փորձում են ներկայացնել սահիկաշարերով:

Երկրորդ ծավալուն գործնական աշխատանքը Մ. Նալբանդյանի կյանքի և գործունեության, ստեղծագործության վերաբերյալ սահիկաշար պատրաստելն է:

Աշակերտներն իրենք են կատարում աշխատանքի բաժանում՝ հավաքել տեղեկություններ , նկարներ, նյութեր, կարդալ գրողի ստեղծագործությունները, ներկայացնել սահիկներով . արդյունքում ստացվում է տեղեկատվական-պատմական- գեղարվեստական- պատկերային – վերլուծական- անսպասելի լուծումներով սահիկաշար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ակնհայտ է , որ գործնական են սովորողի կողմից կատարվող այն աշխատանքները, որոնք վերաբերում են նրանց ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների գործնական կիրառություններին . այսինքն, տեսական գիտելիքները վերածվում են գործնական հմտությունների, տեղի է ունենում տեսական և գործնական գիտելիքների արդյունավետ համադրում և յուրացում:

Գործնական աշխատանքների արդյունքում կուտակվում է պաշար՝ լրացուցիչ ուսումնասիրած նյութերով հարուստ սահիկաշարեր, նկարազարդված գրքույկներ, մտքի քարտեզներ, աղյուսակներ, նկարներ՝ գեղարվեստական խոսքը գույներով ներկայացնելու արդյունքում, տեսանյութեր:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «ԿԶՆԱԿ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱԺՆԻ ՆՅՈՒԹԵՐԸ .

   Գործնական աշխատանքը որպես ձևավորող գնահատման տեսակ

   /կազմողներ՝ Լ. Ալեքսանյան, Ս. Հայթյան, Ա. Բաղալյան /

   ՈՒսուցման գործնական մեթոդներ

2. Գրականության առարկայական ծրագրեր և չափորոշիչներ
3. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ _7-9-րդ դասարանի դասագրքեր
4. Հայ միջնադարյան գրականություն /Վ. Նալբանդյան…/
5. «Սասունցի Դավիթ» էպոս /համահավաք բնագիր/ 1989թ.
6. Մ. Նալբանդյան – Երկեր 1979թ.